ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
PUBLIC JOURNALISM CLUB

Հասցե՝ Սարյան 12, 3-րդ հարկ
Հեռ. +37499 755 898, +37460 505898
Էլ. փոստ info@pjc.am
Կայք՝ www.pjc.am
Թվիթեր՝ @pubjournclub
Ֆեյսբուք՝ http://goo.gl/cOxcMb

ՀՀ Լոռու մարզպետ Արամ Խաչատրյանին
Հանրային լրագրության ակումբի լրագրող Սոֆի Թովմասյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,
համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝

COVID-19 համավարակի ընթացքում հաղորդակցության և իրազեկման գործընթացը կազմակերպելու համար ունեցե՞լ եք արդյոք ռազմավարություն, պաշտոնական փաստաթուղթ, որը ներառել է պլանավորված, հստակ քայլեր: Եթե՝ այո, ապա խնդրում ենք այն տրամադրել մեզ:

Հաղորդակցման ռազմավարության փաստաթղթի բացակայության դեպքում կարո՞ղ եք տրամադրել հաղորդակցման այն քաղաքականությունը, որը որդեգրվել է համավարակի դեմ պայքարի և հանրային իրազեկման համար:

Հանրային լրագրության ակումբը Կորոնավիրուսային համավարակի համատեքստում իրականացնում է հետազոտություն, որը հետագայում օգնելու է բարելավել ՀՀ մարզային պետական կառույցների հաղորդակցային քաղաքականությունը՝ այն առավել ռազմավարական դարձնելով:

Խնդրում ենք հարցմանը պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝ Սոֆի Թովմասյան

18. 12. 2020 թ.

Հանրային լրագրության ակումբի մասին

Հանրային լրագրության ակումբը Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպություն է: Մեր առաքելությունն է՝ խթանել խոսքի ազատությունը, բազմազանությունը եւ բազմակարծությունը Հայաստանում՝ զարգացնելով մասնակցային եւ հանրային թղթակցությունը, քաղաքացիական թղթակիցներին եւ պրոֆեսիոնալ լրագրողներին, լրատվամիջոցներին ու սոցիալական մեդիայի մասնագետներին, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հասարակական այլ ոլորտների մասնագետներին կապող համագործակցության գրավիչ, աշխատանքային կամուրջներ ստեղծելով: